ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 հոկտեմբերի 2015 թվականի 184 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՋԵՎԱՆԻ, ԴԻԼԻՋԱՆԻ, ԲԵՐԴԻ ԵՎ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 31-Ի ԹԻՎ 71-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին'' ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի ,,Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմ'' պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին'' թիվ 1796-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի կանոնադրության 30-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2015 թվականի օգոստոսի 3-ի ,,Սոցիալական աջակցության տարածքային գործակալության և սոցիալական աջակցության տարածքային բաժնի օրինակելի կանոնադրությունները հաստատելու և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2007 թվականի փետրվարի 9-ի N 32-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին'' N 115-Ն հրամանը

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հաստատել Տավուշի մարզպետարանի Իջևանի ՍԱՏԳ-ի կանոնադրությունը համաձայն թիվ 1 հավելվածի:
2. Հաստատել Տավուշի մարզպետարանի Դիլիջանի ՍԱՏԳ-ի կանոնադրությունը համաձայն թիվ 2 հավելվածի:
3. Հաստատել Տավուշի մարզպետարանի Բերդի ՍԱՏԳ-ի կանոնադրությունը համաձայն թիվ31 հավելվածի:
4. Հաստատել Տավուշի մարզպետարանի Նոյեմբերյանի ՍԱՏԳ-ի կանոնադրությունը համաձայն թիվ 4 հավելվածի:
5. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Տավուշի մարզպետի 2006 թվականի հուլիսի 31-ի թիվ 71-Ա որոշումը:
6. Որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ.ԱԲՈՎՅԱՆ

2015թ. հոկտեմբերի 1
Ք. Իջևան